

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Հայ կաթողիկոսների պատրիարք Սրբ. Թերգեանին եւ
Մ. ՄԵՆՇԻԿՈՎԻՈՍ պատասխան

Հայերս դիւրագգաժութիւն ցոյց տուինք՝ երբ Հայ կաթողիկոսների պատրիարք Սրբազան Թերգեանը և «Новое Время»-ի աշխատակից Մենշիկովը մեզ հերետիկոս անուանեցին և Հանգուցեալ Հայրապետի հանդիսաւոր հոգեհանգստին առաջինը ներկայացուցիչ չուղարկեց, իսկ երկրորդը դատապարտեց Կովկասի պրաւոսլաւ աշխարհիկ և հոգևոր իշխանութիւններին՝ որոնք ներկայացուցիչ էին ուղարկել:

Երկուսի էլ արժանաւոր պատասխանը գտնում ենք բուն լատին և բուն օրթոդոքս բարձր հոգևորականների վարմունքի մէջ:

Թերգեան օրբազանին իբրև պատասխան. «Տաճար»ը (15 յունվար) գրում է օր Զմիւռնիայում հոգեւոյս հայրապետի հոգեհանգստին պապական նուիրակի կողմից յատկապէս ուղարկուած են եղել լատին կրօնաւորներ, ներկայ են եղել Զմիւռնիայի հայ կաթողիկոսների առաջնորդը և վեննական մեծաւորը, Կարինում (Արարատ եր. 18) ներկայ են եղել հայ կաթողիկոսների առաջնորդը, Յիսուսեան միաբանութիւնից՝ Հ. Անթուան և Կիւրեղ վարդապետները, Սաքսոնիայի պրինց Մաքսը մեծ հաճութեամբ յաճախում էր հայ եկեղեցիները, և աղօթում ժամերգութեան ժամանակ:

Պ. ՄԵՆՇԻԿՈՎԻՈՍ իբրեւ պատասխան.

Յոյն տիեզերական պատրիարքը և բողոքականների էկզարխը ոչ միայն ուղարկել են բարձրաստիճան ներկայացուցիչներ, այլև Կ. Պօլսոյ յոյն Յովակիմ պատրիարքի Ապօստոլիտիս սարկաւազը «Պրօօտոս» լրագրի մէջ գրում է. (Տաճար յունվ. 5):

«Ազգ. մը (ակնարկելով Հայոց), որ Քրիստոսի կրօնքին համար այնքան նահատակներ տուած է և Կոստանդիանոսէն 11 տարի առաջ Քրիստոնէութիւնը իր կառավարութեան պաշտօնական կրօնքն ըրած է, անշուշտ իրաւասութիւն ունի իր կարծիքն ու քուէն ունենալու կրօնական խնդիրներու մէջ: Ազգ. մը, որ այսքան տարի Բիւզանդիոնի ճակատագրին մասնակցելով, մեր նախնիքներու հետ միասին, խաչի դրօշին տակ կռուած է Տիգրիսի և Եփրատի ափերուն վրայ, թէ խաղաղութեան և թէ պատերազմի ատեն Բիւզանդական կայսրութեան պարծանքն եղած և Բիւզանդական բանակներ յաղթութեան ասպարէզի վրայ առաջնորդող այնքան մարդեր հասցուցած է, արժանի է մեր եղբայրական համակրանքին: Եթէ հին ատեն մեր միջև դէպքեր պատահած են, որոնք արդիւնքն էին այն պայմաններուն, որոնց հետ կապրէին երկու ազգերը, սակայն մեր նախնիքներն երբէք Հայերը չդատապարտեցին կամ չարհամարհեցին իբրեւ հերձուածող, Ընդհակառակն անոնք Հայերուն հետ վարուեցան միշտ գորովով և փափկութեամբ, ինչպէս մեծ քոյր մը կը վարուի իր չփացած փոքրիկ քրոջը հետ: Ըսածներուս ասպացոյցն ալ սա է թէ բազմաթիւ անգամներ ձեռնարկներ եղած են Հայ և Յոյն եկեղեցիները միացնելու: Այսօր այնքան իրական են Հայ և Յոյն Պատրիարքներու յարաբերութիւնները, որ կարելի չէ զանոնք բաղդատել Յունաց Պատրիարքարանին միւս անկախ Օրթոդոքս եկեղեցիներուն յարաբերութիւններուն հետ»:

Այժմ Տաճկաստանում առհասարակ նկատուում է քրիստոնեայ անջատ եկեղեցիների համայնքների մէջ սերտ յարաբերութեան ձգտում:

Հանգուցեալ Հայրապետի հոգեհանգստեան առթիւ փոխանակած այցելութեան միջոցին՝ յոյն պատրիարքը ասել է մեր պատր. փոխանորդին, այդ յարաբերութիւնը հարկաւոր է, գործակցելու՝ երբ կառավարութեան պէտք լինի բացատրել եկեղեցական և կրթական իրաւունքների վերաբերեալ խնդիրներ, որոնք որքան նոյնանան, այնքան

լաւ կըմբռնուեն կառավարութիւնից և նկատառութիւնը կը դիւրանայ:

Հայ և յոյն մերձեցման ջանքերը շարունակուում են. Զրօրհնեաց արարողութեանը Գում-գաբուի հայ աւագ եկեղեցում՝ ներկայ է եղել Շաքին-Գարահիսարի մետրօպօլիտ Պօղիկարիցը յոյն պատրիարքարանի հայագէտ Յովակիմ՝ սարկաւագի հետ, որոնք պատարագից յետոյ պատրիարքարան բարձրանալով շնորհաւորել են Քրիստոսի ս. Ծննդեան տօնը, մաղթելով՝ որ բոլոր եկեղեցիները մէկ լինին ի Քրիստոս: Մեր պատրիարքական փոխանորդը պատասխանել է, չհպելով դաւանաբանական խնդիրների, միանանք եղբայրական սիրով, որ պատրիարքների ընթացքը ազդի ժողովրդի վերայ, և հայերն ու յոյները համերաշխ ապրեն:

Ծննդեան տօնի շնորհաւորութեան առիթով մեր պատրիարքարանը այցելում են պաշտօնապէս յունաց պատրիարքական փոխանորդը գործակատարի հետ, յոյն երեսփոխանների կողմից՝ Խօնէօս էֆէնդին, բոլգարների փոփանորդը: Բոլոր այս հոգեւոր ներկայացուցիչները վկայել են սիրոյ, համերաշխութեան և ի Քրիստոս եղբայրական միութեան անհրաժեշտութիւնը, ընդունելով եկեղեցիների առանձնայատկութեան անհրաժեշտութիւնը, իբրեւ արտայայտիչ ազգային հոգու զգացմանց և աւանդութիւնների:

Այս սրտագին յարաբերութիւնների ժամանակ ամենեւին ակնարկ չէ եղել, թէ որ եկեղեցին հերիտիկօս է և որը ուղղափառ:

Հետաքրքիր է և Վրաստանի էկզարխ Բարձր Սրբազան Խննովկենտիօս արքեպիսկոպոսի հետեւեալ պատասխանը, որ «Баку»-լրագրում (№ 39) արտատպուած է КОЛОКОЛ-ից. ահա այն:

«Վրաստանի էկզարխի պատասխանը Միսիկովին (Վրաստանի էկզարխի՝ КОЛОКОЛ-ի հրատարակչին ուղղած նամակից)

«Կցում եմ սրա հետ Тифлисский Листок լրագրից սոյն հատուածը, խոնարհաբար խնդրում եմ Ձեզ գետեղել «КОЛОЛЬ» լրագրի մերձաւոր համարներից մէկում:

«Կաթուղիկոսի թաղմանը պատգամաւորութիւն ուղարկելով, անպատշաճ բան և կանոնադանցութիւն չեմ արել, որովհետև պատգամաւորները միայն ներկայ են գտնուել իսկ հայերի հետ աղօթակից չեն եղել: Սակայն անհրաժեշտ էր յարգանք յայտնել հանգուցեալ կաթուղիկոսին, որ խիստ օրինապահ էր և հայ եկեղեցին ղեկավարում էր այն ոգով, որ նա խաղժել և յանձնել էր ի գործադրութիւն մեր Սոստափառ Միապետը:

«Մենք Քրիստոսի խաղաղութեան հոգով ապրել ցանկացող լաւ հարեաններ ենք: Երբ սպանեցին Եկղարիս Նիկոն արքեպիսկոպոսին, հայ եպիսկոպոսները կաթուղիկոսի յանձնաւարութեամբ, անխափան ներկայ էին գտնուում հոգեհանգիստներին, ներկայ եղան հանգուցեալի թաղման կարգին և յարգանքով յուղարկաւորեցին աճիւնը մինչև երկաթուղու կայարանը: Պ. Մենշիկովը կամ, աւելի ճիշդ, նրա ետեք թագնուած հոգեւորական անձինքը, որոնք նրան նիւթ են տուել «սահմանագլխի տրքեպիսկոպոսի» վերայ յարձակուելու, չի կամենում հասկանալ քաղաքավարութեան, յարգանքի այն յարաբերութիւնները, որոնք պէտք է լինին բարեկիրթ մարդու յատկորոշ գծերը:

«Պ. Մ. Մենշիկովը նորից յարձակուում է հայերի վերայ, և այս անգամ մեղադրում է նրանց ոչ թէ որպէս անջատման (սեպարատիզմ) ձգտողներ, այլ որ նրանց եկեղեցին և տէրական, այսինքն միաբնակ (մօնօֆիզիտ) է, դրա համար էլ կարծում է, որ հանգուցեալ Իգմիրլեան կաթուղիկոսի թաղմանը Եջմիածին պատգամաւորութիւն ուղարկելը ի դէմս պրաւօսլաւ եկեղեցու բարձրաստիճան անձանց՝ անօգուտ և վիրաւորական է եկեղեցական այն օրէնքների համար, որոնք ցայժմ փոխուած չեն:

«Մենք ի հարկէ չենք մտնի աստուածաբանական նուրբ դատողութիւնների մէջ, թէ հայերը միաբնակ են՝ թէ ոչ: Մի և նոյն է, Պ. Մենշիկովին չես համոզել, ինչպէս չկարողացաւ համոզել Ս. Պետերբուրգի Մկրտիչ քահանայ Ղազարեանը, որ աստուածաբանական բարձր ուսումն ստացել է արտասահմանում, մանաւանդ որ «եկեղեցիների միութեան» հեղինակը իւր դատողութիւնները հիմնում է Ղինչի ցուցումների վերայ, Ղինչի, որ մի ուղեւոր է, և այսպիսի խնդիրների մասին դի-

տութեան շատ սակաւ պաշար ունի: Բայց մենք ձեռքի տակ ունինք մի քանի անհերքելի փաստեր յոյն եկեղեցու և նրա ներկայացուցիչների յարաբերութեան մասին առ հայոց եկեղեցին, որոնք աւելի զիջող են քան ինքն Մենշիկովը:

«Այսպէս, երբ Կ. Պօլսոյ հայ պատրիարքը ղնում է յոյն տիեզերական պատրիարքին Չատիկ շնորհաւորելու, պատրիարքարանում շնորհաւորութեան արարողութիւնը աւարտուելուց յետոյ, մինչև հայ պատրիարքի մեկնելը, յոյն հոգեւորականութիւնը զգեստաւորած մաղթանք է կատարում երաժշտութեամբ և հայ պատրիարքին առաջնորդում է պէպի Ֆանարի պատրիարքական եկեղեցին: Հայ պատրիարքին հրաւիրում են բազմել այն բազկաթոռի վերայ, որ յայտնի է «Ասկերերանի» աթոռ անունով: Այս տեղից նա սկսում է քարոզել յոյն ժողովրդի առաջ, ընտան առնելով քրիստոնէական եղբայրութիւնն ու սէրը և շնորհաւորում է Չատիկը, օրհնելով ներկայ եղողներին: Այսպիսի յարգանք և պատիւներ են տրւում հայոց կողմից յոյն պատրիարքին, երբ նա ղնում է հայ պատրիարքարան փոխադարձ շնորհաւորութեան համար:

«Այսպիսի արարողութիւն կատարում է երկու կողմից էլ և այն ժամանակ, երբ նոր պատրիարք է ընտրւում և շնորհաւորութեան համար հոգեւորականութիւնը խմբւում է պատրիարքարանում:

«Պատահում է, և այն յաճախ, որ արտայայտւում են առանձին յարգանքի ցոյցեր, երբ հոգեւորականի և յայտնի աշխարհականի թաղման յուղարկաւորութիւնը, անցնում է յոյն կամ հայ եկեղեցու մօտով: Յոյն ինչպէս և հայ հոգեւորականութիւնը զգեստաւորուած դուրս է գալիս և հոգեհանգիստ է կատարում՝ կարգալով Աւետարանի պատշաճ գլուխը և հանգստեան երգեր երգելով:

«Նաո սրտագրաւ է տեսնելը, երբ Չատիկ օրը, Կ. Պօլսոյ այն թաղում, ուր մօտ են դրնւում հայ և յոյն եկեղեցիները այդ երկու դաւանութեան հոգեւորականութիւնները անդատանին եկեղեցուց միաժամանակ են թափօր դուրս գալիս և ի ներկայութեան երկու աղգերի բազմամբօխ հասարակութեան միասին անդատտան կատարելուց յետոյ իւրաքանչիւրը վերադառնում է իւր եկեղեցին ժամերգութիւնը շարունակելու:

«Նոյն փոխադարձ պատիւներն են տրւում հոգեւորական անձինքների թաղման ժամանակ երուսաղէմում, մանաւանդ այդ յաճախ է տեղի ունենում յոյների վերաբերութեամբ, որովհետև այդպիսի յուղարկաւորութիւնները անպատճառ

պէտք է անցնեն հայոց Ս. Յակովբեան վանքի առաջով, ուր պատրիարքարանն է:

«Այ միայն այդպիսի խոշոր կենդրոններում, ուր հայ և յոյն մեծ բնակչութիւն կայ, այլ և փոքր—Ասիայի այնպիսի տեղերում, ուր յոյն ազգաբնակչութիւնը համեմատաբար սակաւ է և միայն մի քահանայ կայ, բարձրագիւր անձանց թաղման ժամանակ յոյները դիմում են հայ թեմական առաջնորդին, որ իւր քահանաների և տիրացուների հետ մասնակցի այդ յուզարկաւորութիւններին, որպէս զի յուզարկաւորութեանը մեծ հանդիսաւորութիւն տրուած լինի:

«Յոյն եկեղեցու առ հայ եկեղեցին յարաբերութեան խնդիրն եղբարիակելու համար հարկ ենք համարում մի ցուցումն էլ անել, որ առաջ բերած փաստերը առաւել ևս լաւ լուսաբանուած լինին: Այսպէս, փոքր—Ասիայի այն տեղերում, ու յունական եկեղեցի չըկայ, հիւպատոսարանում ծառայող և այլ պրաւոսլաւ անձինքը իւր ժամանակին դիմել են Կ. Պօլսոյ յոյն տիեզերական պատրիարքին, թէ ծէսեր և ս. խորհուրդները կատարելու դէպքում որ եկեղեցուն պէտք է դիմեն. և պատրիարքը հրամայել է դիմել մի միայն հայ և ոչ ուրիշ եկեղեցու:

«Այսպէս Ռուսաստանում այն տեղ, ուր օտարադաւան քահանայ չի լինում՝ պրաւոսլաւ քահանաները թաղում են թէ կաթոլիկներին, թէ հայերին թէ բողոքականներին և օտարադաւանների գերեզմանների վերայ հոգեհանգիստ են կատարում: Կարելի է հարցնել Մենչիկովին. այդ ինչպէս է որ թոյլ տրւում է հոգեւորականութեանը կատարել թաղման կարգ և թոյլ չի տրւում ներայ լինել թաղումներին:

«Այժմ էլ նոյն յոյն եկեղեցին իւր յարաբերութիւնը լիովին ցոյց տուեց դէպի հայ եկեղեցին և դէպի նրա գլուխը ուղարկելով իւր ներկայացուցիչներին Կ. Պօլսոյ հայոց աւագ եկեղեցին, դեկտեմբերի 19-ին Իզմիրլեան Կաթողիկոսի թաղման օրը հոգեհանգիստին ներկայ լինելու»:

Ահա որտեղ պէտք է տեսնել «Новое Время-ի» աշխատակից Մենչիկովին և Թերզեան պատրիարքին պատասխանները:

Տաճկաստանի հայոց վարչական գործերը

Լրագրները հաղորդում են, որ Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսը հրա-

ժարուել է: Պատճառներն արդէն յայտնի են Արարատի նախորդ համարներից:

Կ. պօլսոյ Հայոց պատրիարք Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանը արդէն հրաժարուած է. Կենդրոնական վարչութիւնը պատրիարքական տեղապահ է ընտրուել Տ. Վահրամ արքեպիսկոպոս Մանկունի, ազգային Երեսփ. ժողովում Յունւ. 14-ին Երեսփոխանների մէջ նախապէս կազմուած համաձայնութեան համեմատ, որոշուել է.

ա. Պատրիարքի հրաժարականը իբրեւ վերջացած գործ խնդրոյ առարկայ չդարձնել.

բ. Նորընտիր Վարչութեան անդամներն անհատական հրաժարականներով իրանց պաշտօնից հեռանան.

գ. Դոկտոր Սեղբոսեան վարչութիւնն ու նախորդ կրօնական ժողովը պաշտօնավարելու հրաւիրուեն մինչև նոր ընտրութիւն:

դ. Աղգ. ժողովոյ $\frac{1}{5}$ -ի վերընտրութիւնը կատարելու հրահանգ տալ վարչութեան և մինչև նորերի ընտրութիւնը հնէրն իրանց պաշտօնը կատարեն:

ե. Մինչև առաջիկայ ապրելի 1-ը $\frac{1}{5}$ -ի փոփոխութեամբ որքան երեսփոխան ընտրուած լինեն, Աղգ. ժողովը պէտք է գումարի իւր օրինական նիստերը:

զ. Պատրիարքի և վարչութեան ընտրութիւնը պէտք է կատարուի ապրելի 1-ի նիստից անմիջապէս մի երկու նիստ յետոյ:

է. Ազգային ժողովը պէտք է ընդունի խորհրդարանական դադար՝ մինչև ապրելի 1-ը, իրաւունք տալով Տեղապահին ու Վարչութեան, որ հարկ դատած ժամանակ ժողով գումարի արդի կազմով:

Հայ կաթոլիկների վերադարձը. Տաճարը (թ. 3) յայտնում է, որ Հալէբի առաջնորդական թեմերից Բէյլանի մէջ 110 անձներ, որ բռնապետութեան ժամանակ կաթոլիկ էին դարձել՝ ամբողջութեամբ վերադարձել են իրանց մայր եկեղեցու գիրկը. Բէյլանից կէս ժամ հեռու Աթըզ

գիւղի կէտը, այսինքն 12 տուն, որոնք կաթուղիկ էին, դարձել են հայ եկեղեցին,

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հունգարիայի հայ կաթուղիկները. «Առարատի» հսկաները ամսատնտեսական, առնելով Հանդէս ամսօրեայից, համառօտ տեղեկութիւն էինք տուել այն ջանքերի մասին, որ Հունգարիայի կաթուղիկ հայերը գործ են դրել յատուկ հայ կաթուղիկ եպիսկոպոս ունենալու համար,

Հունգարիայի հայերը 15—20 հազար են, ցրուած ամբողջ երկրի քաղաքներում և գիւղերում. Ամենահայաշատ քաղաքը—Կերլա, ուր մի ժամանակ 7000-ից աւելի հայեր կային, այժմ, 1910 թուի պաշտօնական ցոցակով, միայն 1240 հայ ունի. Վայրավատին հայերը լինելով կաթուղիկ, մոռանալով ազգային լեզուն ու սովորութիւնները, իբրև հայ՝ կորչելու վտանգի մէջ են, ձուլուելով իրանցից զօրեղ տարրերի հետ խառն ամուսնութիւններով և այլ պատահականութիւններով:

Նրանք, որոնց մէջ ազգային զգացումը դեռ վառ է, ձգտում են ունենալ հայ եպիսկոպոս, որպէսզի սա հսկէր ազգային սովորութիւնների, հայ լեզուով ժամակարգութեան և հայածէս արարողութիւնների անթերի կատարման վերայ, յուսալով, թէ այդպիսով վայրավատին հայ կաթուղիկ այս հատուածի կորստեան առաջը կառնուի:

Իրագրւները հաղորդում են, որ անցեալ դեկտեմբերին հունգարահայերի կողմից Վեննայի Մխիթարեան միաբանութեան արքա Գովրիկեան արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ մի պատգամաւորութիւն է ներկայացել Հունգարիայի Կրօնից նախարար Զիլի կոմսին, որը ռիւսով ընդունել է պատգամաւորներին և հաճութեամբ լսելով նրանց աղերսը, յայտնել է թէ խնդրի վերջնական լուծումն պապի հաւանութիւնից է կախուած. իսկ հայ կաթուղիկ համայնքը հաւատացած է, որ պապի կողմից արգելք չի լինի: